Առաջին զեկուցումն ես վերջացրի այն հաղորդագրությամբ, թէ ռազմական գործողությունները շարունակում են և մեր զօրքերը մասնակի յաջողություն են ունեցել: Ցետագայում ռազմական գործողությունները այնպիսի ընթացք ստացան, որ հայկական բանակի հրամանատարությունը ստիպված եղաւ տաճկի հրամանատարությանը զինադադարի առաջարկ անելու. հակառակորդի կողմից այդ առաջարկն ընդունուեց: Ռազմական գործողություններին զուգընթաց կառավարությունը չդադարեց դիմելու նաև դիւանագիտական միջոցների. նախքան զինադադարի առաջարկ անելը՝ կառավարությունը նոյեմբ. 3-ին յատուկ գրությամբ մէկ դիմում արեց Անգորայի կառավարությանը՝ առաջարկելով բանակցություններ սկսել և վերջնական հաշտություն կնքել Տաճկաստանի և Հայաստանի միջև: Տարօրինակ զուգադիպությամբ Անգորայի կառավարությունը մեզնից առաջ՝ նոյեմբ. 2-ին դիմում է եղել կատարած՝ միևնոյն մտքով, բայց կառավարությունը այդ գրությունը ուշ է ստացել:

Որպէսզի միանգամայն պարզի ձեր առաջ դիւանագիտական բանակցությանց և զինադադարի ընթացքը, ես կը կարդամ այն բոլոր գրություններն ու հեռագիրները, որոնք փոխանակուել են Հայաստանի կառավարության և Անգորայի կառավարության ու տաճկական ուժերի հրամանատարության միջև:

Ահա, թէ ինչ է գրում մեզ Անգորայի կառավարությունը նոյեմ. 2-ին:

2 նոյեմբ. 1920 թ. Անգորա, № 263

Հայկական Հանրապետության Արտաքին Գործերի պ. Նախարարին

Երևան

Այժմ, երբ լիակատար յաղթությունը գալիս է պսակելու մեր արևելեան բանակի ջանքերը, Տաճկաստանի Ազգային Մեծ Ժողովն ուզում է կրկնել հայ ժողովրդին արդէն առաջները իր արած խաղաղության առաջարկը և նորից հաւաստիացնել, որ նա չի ձգտել անցեալում ոչնչացնել Հայաստանը, խլել նրանից իր անկախությունը կամ վտանգել որևէ կերպով նրա իրաւունքները, սակայն, մենք կարծում ենք, որ պարտաւոր ենք պահանջել Հայաստանի կառավարությունից, որ նա նոյնպէս վարի մեզ հետ և դադարի Արևելքում բրիտանական իմպերիալիզմի խոնարհ գործիքը լինելուց: Մենք համոզուած ենք, որ թիւրք և հայ ժողովուրդների իրարու դէմ վարած երկարատև արիւնահեղ կռիւները՝ մինչև 1918 թուականը՝ գլխաւոր պատճառ են ունեցել յաւակնությունները ցարիզմի, որը ձգտում էր տարածել իր իշխանությունը Արևելեան Անատոլիայի վրա: Ցարական բեժիմի տապալումը առաջ բերեց հանգստության շրջան, չնորհիւ այն սառնարիւնության, որ ռուսական զօրքերի հեռանալուց յետոյ, Տաճկաստանը կարողացաւ պահել հայկական հրոսախմբերի կատարած սոսկալի ջարդերի հանդէպ:

Խաղաղությունը, որ մենք այնքան ջանքերով վերականգնեցինք, նորից խախտուեց, երբ իմպերիալիստ Անգլիան յաղթանակելով՝ կամեցաւ պահել Միջագետքը և ձեռք դնել Պարսկաստանի ու Բագուի նաւթաշատ շրջանի վրա:

Ցարիզմին ծառայելուց յետոյ, Հայաստանն այս անգամ Անգլիայի նպատակներին ծառայեց և մեր դէմ բաց արեց նոր դարաշրջան թշնամության, որ շարունակում է դեռ ևս ի մեծ շահ Լոնդոնի ֆինանսիստների: